ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՄՓՈՓՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼԻ ՄԵԿՆԱՐԿԻ ՆԻՍՏԻ

Ք. Վեդի «16» ապրիլի 2025թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ռաֆայել Հակոբյան

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Անդրանիկ Ավետիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Արամ Շիրինյան, Էդգար Ղազարյան, Կարեն Խաչատրյան, Մարո Առաքելյան, Միսակ Սանթոյան, Կարեն Ստեփանյան, Լաուրա Խլոյան, Տիգրան Սիմոնյան, Դավիթ Մեհրաբյան, Գառնիկ Ումրշատյան, Վահագն Միրզոյան, Վարդան Կարապետյան, Արսեն Ալեքսանյան, Մեխակ Խոստեղյան, Սևակ Առաքելյան, Նշան Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ռուզաննա Գաբրիելյան

Օրակարգ

Վեդի համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում առաջարկների ներկայացման փուլի ամփոփում, առաջարկների նախնական գնահատում և հանրային քննարկումների և լսումների փուլի մեկնարկ.

Լսեցին

1. **Հանձնաժողովի նախագահ Ռաֆայել Հակոբյանին,** ով արձանագրեց, որ մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցի համաձայն՝

առաջակների ներկայացման փուլն ավարտվել է և անհրաժեշտ է գնահատել ստացված առաջարկները:

2. **Հանձնաժողովի նախագահի տեղակալ Անդրանիկ Ավետիսյանին**, ով ներկայացրեց ստացված թվով 21 առաջարկները՝ գնահատման համար: Նա նշեց նաև ևս 4 առաջարկների մասին, որոնք մուտքագրվել և ապա հեռացվել էին քաղաքացիների կողմից՝ թերի, ոչ լիարժեք կամ կրկնողություն լինելու պատճառով: Ինչպես նաև ստացված երկու առաջարկի մասով, բնակիչների խնդրանքով Առաջարկների մեջ փոփոխություն անելու վերաբերյալ նշվեց, ինչը վերաբերում է՝ ստորև ներկայացված Առաջարկ 7-ում *մշակույթի տան վերանորոգում* մասը փոխարինել *մշակույթի տան տանիքի վերանորոգում* բառերով, Առաջարկ 16-ում *բազմաֆունկցիոնալ* բառը փոխարինել *սիրողական* բառով:

Առաջարկ 1. ***Զբոսայգու հիմնանորոգում Տափերական բնակավայրում***

Առաջարկ 2. ***Հուշահամալիրի բարեկարգում Արալեզ բնակավայրում***

Առաջարկ 3. ***Մանկական խաղահրապարակի կառուցում Ոսկեփափում***

Առաջարկ 4. ***Ֆուտբոլային խաղադաշտի վերակառուցում և կահավորում Սիսավան բնակավայրում***

Առաջարկ 5. ***Սպորտ հրապարակի կառուցում Լուսառատ բնակավայրում***

Առաջարկ 6. ***Գյուղմթերքի շուկայի կառուցում Փոքր Վեդի բնակավայրում***

Առաջարկ 7. ***Մշակույթի տան վերանորոգում Այգավան բնակավայրում***

Առաջարկ 8. ***Զբոսայգու բարեկարգում Լուսառատ բնակավայրում***

Առաջարկ 9. ***Մշակույթի տան և վարչական շենքի բակի վերանորոգում Այգավան բնակավայրում***

Առաջարկ 10. ***Հրեշտակների ձոր տանող ճանապարհի բարեկարգում Դաշտաքար բնակավայրում***

Առաջարկ 11. ***Մեծահասակների համար ժամանցի /տաղավարային/վայրի կառուցում Լանջանիստ բնակավայրում***

Առաջարկ 12. ***Մարզահրապարակի, խաղահրապարակի կառուցում Նոր ՈՒղի բնակավայրում***

Առաջարկ 13. ***Հուշաքարերի տարածքի բարեկարգում Լանջանիստ բնակավայրում***

Առաջարկ 14. ***Այգու բարեկարգում Նոր Կյանք բնակավայրում***

Առաջարկ 15. ***Մեծահասակների հանգստի և ժամանցի տաղավարի կառուցում Վանաշեն բնակավայրում***

Առաջարկ 16. ***Բազմաֆունկցիոնալ բաց մարզադաշտի կառուցում Եղեգնավան բնակավայրում***

Առաջարկ 17. ***Հուշահամալիրի բարեկարգում***

Առաջարկ 18. ***Մշակույթի տան դահլիճի վերանորոգում Վանաշեն բնակավայրում***

Առաջարկ 19. ***Մշակույթի տան դահլիճի վերանորոգում Վանաշեն բնակավայրում***

Առաջարկ 20. ***Մշակույթի տան դահլիճի վերանորոգում Լուսառատ բնակավայրում***

Առաջարկ 21. ***Կանաչապատ զբոսայգու, խաղահրապարակի կառուցում Շաղափ բնակավայրում***

Առաջարկեց գնահատել ստացված բոլոր առաջարկները, որի արդյունքում մերժվեցին հետևյալները՝

- *Առաջարկ 11-ը և 13-ը* հանդիսանում են կրկնողություն: Չնայած առաջարկների վեռնագրերը տարբեր են, այնուամենայնիվ դրանք վերաբերում են միևնույն տարածքի բարեկարգմանը: Ուստի, առաջարկները կմիավորվեն՝ առաջնահերթություն տալով Առաջարկ 13-ին, որը առավել ամբողջական է ներկայացված:
- *Առաջարկ 17-ը* մերժվում է թերի ներկայացվելու պատճառով: Նշված չէ հասցե, կցված չէ հայտը:
- *Առաջարկ 18, 19-ը* մերժվում են, քանի որ կրկնողություն է, և մշակույթի տան դահլիճի վերանորոգումը հնարավոր չէ իրականացնել ավագանու որոշմամբ սահմանված գումարի սահմանաչափին համապատասխան: Շենքը գտնվում է անմխիթար վիճակում, որի վերանորոգումը կպահանջի 20 կամ 10 մլն << դրամից ավել գումար: Նաև, Առաջարկ 19-ը ներկայացված է եղել թերի՝ կցված չէ հայտը և չկան լուսանկարներ:
- *Առաջարկ 20-ը* մերժվում է, քանի որ մշակույթի տան դահլիճի վերանորոգումը հնարավոր չէ իրականացնել ավագանու որոշմամբ սահմանված գումարի սահմանաչափին համապատասխան: Շենքը գտնվում է անմխիթար վիճակում, որի վերանորոգումը կպահանջի 20 կամ 10 մլն << դրամից ավել գումար: Նաև, Առաջարկ 20-ը ներկայացված է եղել թերի՝ կցված չէ հայտը:

Ստացված առաջարկներից ընդունվեցին դրական գնահատված թվով 16 Առաջարկ՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 12, 13, 14, 15, 16, 21, (այդ թվում՝ Առաջարկ 7-ում *մշակույթի տան վերանորոգում*

մասը փոխարինելով *մշակույթի տան տանիքի վերանորոգում* բառերով, Առաջարկ 16-ում *բազմաֆունկցիոնալ* բառը փոխարինելով *սիրողական* բառով):

Քննարկումների արդյունքում հանձնաժողովը որոշեց

1. Նախնական գնահատման փուլում դրական գնահատված Առաջարկները՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 12, 13, 14, 15, 16, 21 տեղափոխել Հանրային քննարկումների և լսումների փուլ՝ քվեարկության փուլին ընդառաջ՝ մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցի համաձայն:
2. Սկսել Հանրային քննարկումների և լսումների փուլը՝ հաստատված ժամանակացույցին համապատասխան:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ռաֆայել Հակոբյան

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ _____ Անդրանիկ Ավետիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռուզաննա Գաբրիելյան